Կարծիք

Ռաֆայել Ռաֆայելի Մարգարյանի «Արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական ռազմավարության ձեվավորման հիմնախնդիրները (ԳԱ, «Թայֆուն» սարքաշինական ձեռնարկության օրինակով) թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից պայմաններում տնտեսավարող սուբյեկտների երկարաժամկետ կայուն զարգացման խնդիրների լուծումը գիտական և գործնական ուսումնասիրությունների առումով դարձել է չափազանց հրատապ և կարևոր: Կազմակերպությունների երկարաժամկետ կայուն զարգացման հիմքը ֆինանսական բաղադրիչն է՝ որպես ֆինանսատնտեսական գործունեության հիմնական տարր:

Արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման կորպորատիվ և ֆինանսական ռազմավարության մշակման խնդիրները ներկայացված են ՌԴ և հետխորհրդային երկրների գիտնականների աշխատություններում: Ֆինանսական կառավարման տեսության և պրակտիկայի զարգացման գործում զգալի ներդրում են ունեցել նաև օտարերկրյա այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք են՝ Ռ.Ակոֆը, Դ.Ա. Ակերը, Ի.Անսոֆը, Զ. Բոդին, Ռ. Բրեյլին և այլոք:

Անկախ այն հանգամանքից, որ ֆինանսական ռազմավարության ձևավորման, ինչպես նաև կորպորատիվ կառավարման և ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման առումով առկա են բազմակողմանի հետազոտություններ, այդուհանդերձ Ռուսաստանի ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների նորարարական զարգացման հարցերի տեսական և գործնական ուսումնասիրության շատ ոլորտներ երկարաժամկետ հեռանկարում չեն առժանացել անհրաժեշտ ուշադրության:

Հայեցակարգային անհրաժեշտ հիմքերի ձևավորումը և ժամանակակից գործնական մոտեցումների ներդրումը կանխորոշել են քննարկվող «Արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական ռազմավարության ձևավորման հիմնախնդիրները (ԳԱ «Թայֆուն» սարքաշինական ձեռնարկության օրինակով)» թեմայով Ռ. Մարգարյանի

ատենախոսական հետազոտության օբյեկտի և թեմայի ընտրությունը, նպատակների և գիտական նորույթի ձևակերպումը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակը Ռուսաստանի Դաշնության ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների ֆինանսական ներուժի զարգացմանը, դրանցում ֆինանսական հոսքերի օպտիմալացմանը, հնարավոր մարտահրավերների դիմակայությանը և երկարաժամկետ կայուն զարգացման ձևավորմանն ուղղված առաջարկությունների մշակումն ու ներդրումն է:

Դրված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական ռազմավարության ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- ✓ բացահայտել տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական ռազմավարության ձևավորման վրա ազդող դրական և բացասական գործոնները,
- ✓ ուսումնասիրել արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական ներուժի զարգացման և գնահատման հայեցակարգային հիմքերը,
- ✓ իրականացնել հնարավոր մարտահրավերների և սպառնալիքների պայմաններում արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության վերլուծություն,
- ✓ գնահատել տնտեսության արդյունաբերական ոլորտի երկարաժամկետ կայուն զարգացման ապահովման և ֆինանսական ռազմավարության ձևավորման գործում նորարարական բաղադրիչի ազդեցության սահմանները,
- ✓ մշակել ՌԴ ռազմաարդյունաբերական համալիրի նորարարական զարգացման և նախանշել դրա ձեռնարկությունների կողմից կայուն ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնելու հիմնական ուղղություններ,
- ✓ մշակել գործնական առաջարկություններ ՌԴ ռազմաարդյունաբերական համալիրի ոլորտում ձեռնարկությունների ֆինանսական ներուժի զարգացման և դրանցում կառավարման համակարգի արդիականացման համար,
- ✓ ներդնել մշակված մոտեցումները և առաջարկությունները ՌԴ ԳԱ «Թայֆուն» սարքաշինական ձեռնարկությունում:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Հետազոտության արդյունքների գիտական նորույթը կայանում է ատենախոսությունում դիտարկվող հիմնախնդրի տեսական և մեթոդական հիմքերի համալրման, ռազմաարդյունաբերական համալիրում ձեռնարկությունների երկարաժամկետ զարգացման ֆինանսական ներուժի կառավարման նպատակով արդյունավետ ռազմավարության ձևավորման, ինչպես նաև հնարավոր մարտահրավերների և սպառնալիքների պայմաններում գործնական առաջարկությունների մշակման մեջ: Իրականացված հետազոտությունում ստացվել են գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- Ժամանակակից պայմաններում տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական ռազմավարություն հասկացության հստակեցմամբ մշակվել է արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության համար կայուն ֆինանսական միջավայրի ձևավորման մոդել, որը ելնելով կոնկրետ ձեռնարկությանը բնորոշ առանձնահատկություններից, թույլ է տալիս դրա ֆինանսական միջավայրի ձևավորման վրա ազդող որոշ գործոնների անորոշության պայմաններում էականորեն մեծացնել ձեռնարկության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված կանխատեսումների հավաստիության աստիճանը:
- Մշակվել է ձեռնարկությունների ֆինանսական ներուժի կառուցվածքի և դրա ձևավորման աղբյուրների մոդել, որը թույլ է տալիս փաստացի ֆինանսական ակտիվների ռեսուրսային, հարկային, վարկային և ներդրումային բաղադրիչների համախմբում դիտարկել հեռանկարային ոչ նյութական ակտիվների այնպիսի գործոնների դերը ձեռնարկությունների ֆինանսական ներուժի մեծացման գործում, ինչպիսիք են գիտատեխնիկական, կազմակերպական, աշխատանքային, նորարարական, տեղեկատվական և շուկայական գործոնները:
- Առաջարկվել է ձեռնարկությունների ֆինանսական ներուժի էքսպրես գնահատման մեթոդ, որը թույլ է տալիս նպատակային կողմնորոշիչների տեսանկյունից իրականացնել դրանց գործունեության երկարաժամկետ

հեռանկարի դինամիկ գնահատում և ապահովվել ցանկալի ֆինանսական արդյունք, հաշվի առնելով նաև ոչ նյութական ակտիվների բաղադրիչները:

- Ատենախոսությունում իրականացված հետազոտության արդյունքները դիտարկվել են Ռուսաստանի Դաշնության ռազմաարդյունաբերական համալիրի կարևոր կազմակերպություններից մեկի՝ ԳԱ «Թայֆուն» սարքաշինական ձեռնարկության օրինակով:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված է դիտարկվող խնդրի գիտական ուսումնասիրության աստիճանը, ձևակերպված է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, ինչպես նաև աշխատանքում ստացված գիտական նորույթը: Ներածությունում ներկայացված են նաև հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, բացահայտված է ուսումնասիրության տեղեկատվական բազան, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Առաջին՝ «Արդյունաբերական ձեռնարկությունների երկարաժամկետ կայուն զարգացման ֆինանսական ռազմավարության ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում կատարվել է «ֆինանսական ռազմավարություն» հասկացության վերլուծություն, բացահայտվել են ֆինանսական ռազմավարության ձևավորման վրա ազդող գործոնները: Այստեղ ուսումնասիրվել են արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական ներուժի զարգացման, դրա ռացիոնալ օգտագործման և գնահատման հայեցակարգային հիմքերը, համակարգվել են ձեռնարկության կայուն տնտեսական զարգացման կառավարման ֆինանսական ռազմավարության ընտրության մեթոդաբանական սկզբունքները:

Երկրորդ՝ «Արդյունաբերական ձեռնարկությունների կայուն զարգացման վրա ֆինանսական ռազմավարության ազդեցությունը» գլխում, արդի մարտահրավերների և հնարավոր սպառնալիքների պայմաններում դիտարկվել են արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության

հարցերը, ուսումնասիրվել են ձեռնարկության նպատակամետ գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռազմավարության ձևավորման առանձնահատկությունները՝ հիմնված ֆինանսական պլանավորման և բիզնես պայմանների կանխատեսման վրա: Ընդ որում, կանխատեսումների ժամանակ առանձնահատուկ գնահատվել է ինովացիոն բաղադրիչի ազդեցությունն երկարաժամկետ զարգացում ապահովելու գործում:

Երրորդ՝ «Ժամանակակից պայմաններում Ռուսաստանի Դաշնության ռազմաարդյունաբերական համալիրի երկարաժամկետ կայուն նորարարական զարգացման ուղիները» գլխում, ներկայացվել են ռազմաարդյունաբերական համալիրի նորարարական զարգացման հիմնական խնդիրները, առաջարկվել են ժամանակակից պայմաններում արդյունաբերական ձեռնարկությունների կայուն ֆինանսատնտեսական գործունեությանը հասնելու հեռանկարներ: Բացահայտված խնդիրները և արված առաջարկությունները դիտարկվել են ԳԱ «Թայֆուն» սարքաշինական ձեռնարկության օրինակով, մշակվել են գործնական առաջարկություններ՝ ռազմաարդյունաբերական ոլորտում ձեռնարկությունների ֆինանսական ներուժի զարգացման, կառավարման համակարգի արդիականացման և ֆինանսական ռազմավարության ձևավորման ուղղություններով:

Եզրակացություններում ամփոփվել են ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները, ձևակերպվել են մշակված մոտեցումները և գործնական առաջարկությունները:

Ընդհանուր առմամբ, Ռ.Ռ.Մարգարյանի ատենախոսությունը հանդիսանում է ամբողջական հետազոտություն, որն իրենից ներկայացնում է ժամանակակից ու հրատապ խնդիրների լուծում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Նշված առավելություններով հանդերձ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից, որոնցից հատկամշականը հետևյալներն են.

1. Աշխատանքը անհարկի ծանրաբեռնված է տարբեր հեղինակների ու մասնագետների բազմաթիվ կարծիքներով և հայտարարություններով ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության տեսական և մեթոդական

գնահատականների շրջանակներում: Այդպիսի հղումներն ու տեղեկություններն այնքան շատ են, որ այս թեմայում կորել է ատենախոսի կարծիքը՝ այն իմաստով, թե ինչ է մտածում ու առաջարկում հեղինակը: Աշխատանքի մոտ 30-35 տոկոսը տարբեր կատեգորիաների հեղինակների և մասնագետների գնահատականների ներկայացում է, որը, մեր կարծիքով, չափազանցված է:

2. Աշխատանքի 112-րդ էջում հեղինակը իրավացիորեն նշում է որ գիտական գրականության վերլուծությամբ բացահայտվել է համապարփակ տնտեսական և մեթոդական ուսումնասիրությունների և կոնկրետ գործնական ու մեթոդական ուղեցույցների բացակայությունը ֆինանսական պլանավորման ընթացակարգերի իրականացման ժամանակ, երբ ռուսական ձեռնարկությունները ֆինանսական և տնտեսական գործունեության առումով ունեն ոլորտային և այլ բնույթի բազմաթիվ առանձնահատկություններ: Դրա վերաբերյալ մեր եզրակացությունն այն է, որ գրականության մեջ իսկապես չկան տեսական և մեթոդաբանական համապատասխան ուսումնասիրություններ: Եթե դա այդպես է, ապա որտե՞ղ է հեղինակի համապարփակ ուսումնասիրությունը տվյալ հարցում: Տարբեր տեսակի գործունեությունների ներկայացումը, ներառյալ ֆինանսավորման աղբյուրների և նորարարության անհրաժեշտությունը, դեռևս չի կարելի համարել պատասխան այդ հարցին: Մասնավորապես, հետազոտությունում հաճախ է հիշատակվում ձեռնարկությունների ֆինանսական ներուժի կառավարման արդյունավետության գնահատման մասին, ներառյալ ԳԱ «Թայֆուն» սարքաշինական ձեռնարկությունը, սակայն վերջինիս գործունեության արդյունավետության գործնական և մեթոդական գնահատականները բացակայում են:

3. Գիտական նորույթի չորրորդ կետի առումով անհրաժեշտ է նշել, որ այն չի կարելի որակել որպեզ գիտական նորույթ, քանի որ, ինչպես նշում է հեղինակը, ատենախոսությունում իրականացված ուսումնասիրության արդյունքնքները պարզապես դիտարկվել են ԳԱ «Թայֆուն» ձեռնարկության օրինակով:

4. Ուսումնասիրության մեջ, իհարկե, դրական է, տրված է ԳԱ «Թայֆուն» ձեռնարկության միկրոտնտեսական վերլուծություն, այսինքն ներկայացված են ձեռնարկության տնտեսական ցուցանիշները, 141-րդ էջում ներկայացված վերլուծության արդյունքները վերաբերվում են 2016-2018թթ: Միևնույն ժամանակ 142-րդ էջում

իրականացված կանխատեսումները ներառում են 2021-2023 թթ, ինչը կարող է ստեղծել հակասություններ աշխատանքում ստացված արդյունքների մեջ:

5. Հաշվի առնելով 4-րդ կետի դիտողությունը և հաշվի առնելով այն, որ ԳԱ «Թայֆունը» ռազմաարդյունաբերական ձեռնարկություն է, փաստորեն, հինգ տարվա վաղեմության վերլուծությունը թույլ չի տալիս դիտարկել Ուկրաինայում հատուկ ռազմական գործողության հետևանքները և, համապատասխանաբար, այս ձեռնարկության արտադրանքի պատվերների և պահանջարկի ակնկալվող աճը: Սա նույնպես մեծ թերություն է:

6. Գիտական հետազոտությունների բարդությունն ապահովելու համար անհրաժեշտ է համատեղել տնտեսական և ֆինանսական գործիքները մակրո և միկրո մակարդակներում, ներառյալ իրավական կարգավորումների դիտարկումը: Մասնավորապես, 2015 թվականից Ռուսաստանի Դաշնությունում գործում է «Արդյունաբերական քաղաքականության մասին» դաշնային օրենքը, որը ձևակերպում է արդյունաբերության ոլորտի և շուկայի իրավական կարգավորման հիմնական դրույթները: Ցավոք, հեղինակը չի վերլուծում ոչ միայն վերը նշված, այլև այլ օրենսդրական ու իրավական ակտերը, այդ թվում՝ «պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքը: Սա նույնպես այս աշխատանքի հիմնական թերություններից է:

7. Ցանկալի կլիներ, որ Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության, ներառյալ ԳԱ «Թայֆուն» ձեռնարկության ֆինանսատնտեսական գործունեությունը վերլուծող ատենախոսությունը համապատասխան վերլուծություն կատարեր ձեռնարկության համագործակցային հարաբերությունների ոչ միայն ԵԱՏՄ և այլ երկրների ձեռնարկությունների հետ: Օրինակ, հետաքրքիր կլիներ իմանալ, հաշվի առնելով ԳԱ «Թայֆուն»-ի առանձնահատկությունները, թե ինչ հորիզոնական կապեր ունի այս ձեռնարկությունը Նիժնի Նովգորոդի նմանատիպ գործիքաշինական գործարանների, Ռուսաստանի «Ավիասպեցկոմպլեկտ» ձեռնարկությունների հետ, որոնք սերտորեն համագործակցում են հայկական ձեռնարկությունների հետ, ինչպիսիք են Օրբիտա գործարան, Ալմաստ, «Արաքս» և այլն:

8. Ատենախոսության մեջ կան նաև որոշ խմբագրական և ոճական սխալներ:

Այս դիտողությունները չեն նվազեցնում ստացված արդյունքների նշանակությունը և չեն ազդում Ռ.Ռ. Մարգարյանի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Եզրակացություն

Ատենախոսության հիմնական դրույթները զեկուցվել և քննարկվել են Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ֆինանսահաշվապահական հաշվառման բաժնում: Ատենախոսության հիմնական դրույթներով տպագրվել է 10 գիտական հոդված ՀՀ բարձրագույն ատեստավորման հանձնաժողովի և Ռուսաստանի Դաշնության բարձրագույն ատեստավորման հանձնաժողովի ցանկում ընդգրկված հրապարակումներում:

Սեղմագիրը և հրատարակված աշխատանքները բավականին լիարժեք արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, բնութագրում հետազոտության արդյունքները:

Լուծվելիք առաջադրանքների մակարդակը կարծես թե համապատասխանում է տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է 08.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահություն» մասնագիտությանը:

Ռաֆայել Ռաֆայելի Մարգարյան «Արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական ռազմավարության ձևավորման հիմնախնդիրները (ԳԱ, «Թայֆուն» սարքաշինական ձեռնարկության օրինակով)» ավարտված գիտական և որակավորման աշխատանք է, որը, ըստ չափանիշների. եզրակացությունների համապատասխանության, գիտական նորության, վավերականության և հավաստիության, համապատասխանում է «Գիտական աստիճաններ շնորհելու կարգի կանոնակարգի» պահանջներին: Ատենախոսության թեկնածու Ռաֆայել Ռաֆայելի Մարգարյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը 08.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, **Մ. Ս. Մելքումյան**

Մ. Ս. Մելքումյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

10 մայիսի 2023 թ.